



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

N 20 - L

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ԿԱՄ ԱՎԱԳ ԽՄԲԻ
ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՊԱՇՏՈՆՆԵՐԻ
ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 270-Լ որոշման պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել բարձրագույն կրթություն ունեցող անձանց Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության միջին կամ ավագ խմբի պաշտոններում նշանակելու համար համապատասխան մասնագիտությունների և պաշտոնների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության անձնակազմին:

Ա. Սարգսյան

« 07 03 » 2025թ.
ք. Երևան

Հավելված

ՀՀ ՆԳ նախարարի
<<07> 03 2025թ.
N 20-լ հրամանի

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ԿԱՍ
ԱՎԱԳ ԽՄԲԻ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Մասնագիտությունը	Մասնագիտական կրթության որակավորման աստիճանները
1.	Քրեական ոստիկանության գլխավոր վարչության կիբեռնահնցագործությունների դեմ պայքարի վարչության պաշտոններ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ, տվյալագիտություն, ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) կամ բարձր տեխնոլոգիաների ոլորտի որևէ մասնագիտություն	առնվազն բակալավր
2.	«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման դեպարտամենտների, վերապատրաստման կենտրոնի և ծառայության բաժնի պաշտոններ	Իրավագիտություն, ընդհանուր մանկավարժություն, մասնագիտական մանկավարժություն, կառավարում	առնվազն բակալավր
3.	Բժշկական ծառայության պաշտոններ	Բուժական գործ, բուժական գործ զինված ուժերում, ստոմատոլոգիա, դեղագիտություն, կենսաբանություն, կենսաքիմիա, հանրային առողջություն և առողջապահություն, ռազմական կրթության որևէ մասնագիտություն, Ֆարմացիա կամ հոգեբանություն	առնվազն հետբուհական կրթություն (կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա)